

# Բ Ա Ն Ա Վ Ե Ճ Ե Վ Ք Ն Ն Ա Ր Կ Ո Ւ Մ

Մ. Ս. ԶՈՒՄՈՒՆՅ

## ՉՈՒԳԱՐԱՅԵՐԻ ԵՎ ԲԱՅԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ (ԸՍՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ)

Հ. Մաթևոսյանի գեղարվեստական արձակի լեզուն բնորոշվում է խոսքի գեղեցկությամբ ու բազմազանությամբ, պատկերների արտահայտչականությամբ և բանականական ու քերականական առանձնահատկություններով, որոնք ստեղծվում են ոճական հնարանքներով, հայերենում եղած լեզվական բազմաթիվ միջոցներով: Թծնայի ու թեմատիկայի ընտրությունը հեղինակին մղել է դեպի համազգային լեզվի գործառական տարբեր ոլորտներ: Գրական տարբերակին համեմված բարբառային կամ պարզապես ժողովրդական ձևերը և դրանց օրինակով ստեղծված արտահայտությունները գրեթե հավասարապես դրսևորվել են հեղինակի և հերոսի խոսքերում: Երևույթի լեզվական վերարտադրությունը հեղինակին մղել է բազմաձև հնարանքների, որոնցից հատկանշական է նոր բառերի ու արտահայտությունների ստեղծելը:

Քառակազմական օրինաչափություններին և քնական, հուզարտահայտչական խոսքի վերարտադրությանը հետևելով՝ Հ. Մաթևոսյանը հայերենի բառապաշար է մտնել բազմաթիվ նոր բառեր ու դարձվածային միավորներ: Նշելի է, որ նորարարություններ Հ. Մաթևոսյանը կատարել է հատկապես հարադիր բայերի կազմությամբ առումով: Ուսումնասիրության արժանի հարադիր բայերի գործառույթում, սակայն, զանազանելի են զուգաբայերը և բայական կապակցությունները, որոնց միջոցով գործողության, վիճակի հեղինակային վերարտադրությունը շոշափելի է դարձրել ընդհանրական և տարածքային լեզվամտածողության առանձնահատկությունները: Տվյալները վկայում են, որ բայական բաղադրիչներն ամենաշատը գործածված են «Տերը» ստեղծագործության մեջ:

Ընդհանրապես բայական բառույթի շարահյուսական արտահայտությունը հարուստ դրսևորումներ ունի ժողովրդական լեզվում, հակառակ գրականին, որտեղ այդպիսիք որոշակի կանոնների են ենթարկվում: Ստորգծման համակարգը ժողովրդական լեզվում կազմում է երևույթի պատկերավորման բայդ և լայն ցանց: Շարժման անսահման դրսևորումները հնարավոր չէ սպառել կերպով արտահայտել սահմանափակ բառապաշարով: Տարածն զինամիկության արտահայտման և պատկերների ընթանման համար ժողովրդական և գրական տարբերակներում զուգաբայերը կարող են տարբեր հատկանիշներով միավորվել: Մրանց կողքին, սակայն, Հ. Մաթևոսյանի արձակում կան այնպիսի կազմություններ, որոնք չեղվում են բանականական ընդհանուր օրինաչափություններից: Այդպիսիք, կարծում ենք, նախ և առաջ զուգաբայերի անալոգիայով կազմված ձևերն են, օր.՝ «...կարողը մեքենայի խցից ելել քիթը քչվորած էր, քոխիները ինչ մտածեցին,

մեքենայի բավորից ներքև ցատկեցին. մոլորված դետուդեն նայեցին» /Տ. 254/։ Դրանք հիմնականում տարածված են կենդանի լեզվում, իսկ արձակում շատ հաճախ ծառայում են գեղարվեստական խոսքի պատկերավորմանը։ Հ. Մաթևոսյանի ստեղծագործություններում ձևիմաստային տեսակետից այդպիսիք մնան են գուգաբայերին, բայց որոշ կանոնների չենթարկվելու պատճառով կայուն վերլուծական բարդություններ համարվելուց հեռանում են՝ հանդես բերելով պատկերների արտահայտման հեղինակային վերաբերմունք. «...երիխաների խումբը եկել մասնաբառիին մեզ դեռ էր ընկել ու կանգնած մայուն էր...» /Տ. 255/։ Հ. Մաթևոսյանի գեղարվեստական արձակի լեզվի ժողովրդայնությունը և զգայականությունը, ժողովրդական այլ ոճերի հետ միասին, հատկանշվում են նաև այդպիսի կազմությունների միջոցով։ Հեղինակը հիմնականում հարազատ է մնում ընդունված ձևերին և այդպիսիք գործածում պահանջված օրինակափոխություններով, մի այլ անհրաժեշտությամբ գործածում յուրահատկություններով, կազմության տարածությունը, իմաստային առանձնահատուկ հատկանիշներով, հմնում՝ «Քարտաշն ու աշակերտը իրենց խաչքարը Մուրադենց կարմիր քարհանքում տաչել, մի ջահել ծառի վրա կապել, եզան մման երկուսով լծվել, քերել հասցրել էին ահա-ահա սողանի գլուխը» /Տ. 303/, սրա դիմաց՝ «մեռնել» միաշեշտ բայի փոխարեն գործածում է «գնալ-գաղղվել» կապակցությունը, որ ինչպես նկատվում է, իբրև դարձվածային կապակցություն՝ իր մեջ կրում է երկու իմաստ՝ «գնացին չեկան» և, որքան էլ զարմանալի, մահվան երևույթի սաստկականություն՝ «չարարանքով մեռնել»։ «Մեր սերը մեր հայրերի հին սերունդն էր՝ որ գնաց պատերազմում ջարդվեց...» /Տ. 309/։

Չուգաբայերը կայուն կապակցություններ են և խոսքում մեծամասամբ արտահայտվում են հոմանիշ, հականիշ կամ իրար առնչակից գործողություն ցույց տվող բայ-բաղադրիչներով, օր.՝ «Նրա հեռանալուց հետո կանայք մայում տեսնում են Մարոյի աղջիկը հասած աղջիկ է ու սիրում է...» /Տ. 295/, հականիշ՝ «Մենք գոհվածների՞, - ասացինք,- քեզ էինք խոսեցնում՝ որ երեսդ մեզ անես, որովհետև քանի անցանք դարձանք՝ քո տեղը քրոջ տղա չկար-քանակ էր» /Տ. 316/, «Հին պահեստների լքված են, վարչության հին շենքը մաշվել ահա ավերակ է դառնում» /Տ. 309/ և այլն։ Սրանց կողքին առկայանում են զուգաբայական արժեք ունեցող կապակցություններ, որոնք, համեմայն դեպս, բառարաններում առանձին բառ կամ բառահոդված չեն կազմում։ Ըարահյուսական հարաբերությունը որոշվում է երկու բայերով, ուստի և մախադասության ընթացակամությունը որոշում են երկուսն էլ միասին։ Ըարադասությամբ դրանք այնքան էլ կանոնավորված չեն, որն էլ ոճի մակարդակում ստեղծում է մի տեսակ լեզվախաղ։ Այս կարգի կապակցությունները կարելի է առանձնացնել, քանի որ սրանց հիմնական առանձնահատկությունն այն է, որ մատնանշում են մեկ գործողություն՝ առանձին ու «ենթակա» գործողություններով ամբողջացած, ինչպես՝ «Կռացանք մեքենայի ու ձիու արանքը նայեցինք, շտկվեցինք սպասեցինք» /Տ. 305/։ «Կռանալ - նայել» գործողությունը մեկն է, և ամենևին էլ «կռանալով նայել»-ը չէ, կամ «ուղղվել - սպասել» մեկ գործողությունը «ուղղվելով սպասել»-ը չէ։ Սրանցում ոչ թե նայելու կամ սպասելու կոնկրետ ձևերն են հատկանշվում, այլ փնտրելը և

\* Օրինակները բերված են Հ. Մաթևոսյանի «Տերը» վիպակների ժողովածուից (Ե., 1983), Արևիկի Լրկատրոյակից, (Ե., 1983)։

հապաղելը. Իմաստային փոփոխությունը ենթադրում է, որ այդ կազմությունները կարող են ընդգրկվել դարձվածային կապակցությունների շարքում: Բայ բաղադրիչների արտահայտած իմաստների՝ մի հասկացություն արտահայտելու միտված լինելը կամ երկուսի ամբողջությամբ մեկ ընդհանուր գործողության պատկերը խիստ ընկալելի և տեղից է. հեղինակը ավելի ճիշտ, տեսանելի և տպավորիչ է ստեղծել միասնական կապի մեջ առձևված երկու գործողությունների արտահայտած ընդհանուր յուրահատուկ նշանակությունը, որ չեն արտահայտում սովորական բայերը, օր.՝ «Եվ առջևի սպիտակ ոտքը երևում կորչում, երևում կորչում էր քանդվող սարքվող խաչվածքների մեջ» /Ն.գ. 329/, «...չի մտածում, ետում է ետում ու տալիս պայթում է, դե գնա ու քրիստոսի քո հորդորով ճեղքը ծեփիր» /Ջ. 132/ և այլն: Չնայած բաղադրիչներից յուրաքանչյուրը մյուսից անկախ գործածություն և իմաստ ունի, այնուամենայնիվ նախադասության մեջ երկու բայերի միավորվելը մատնանշում է մի գործողություն, որի ընդհանուր պատկերը ամբողջաճանու է աճող, ձևային ընթացքի մեջ գտնվող, անցումային կամ ավարտին հասած իրողության մեջ: Բառերի միավորմամբ, փաստորեն, երևույթի արտահայտումը լեզվամտածական դաշտում բազմապատկեր շարժումը «մերում», մի ամբողջական գործողության պատկեր է ստեղծում. «...ուշքի եկավ, դարձավ մեր ծանր հայացքին հանդիպեց, ասաց» /Տ. 305/: Խոսակցական ոճին բնորոշ բայ բաղադրիչներով կազմությունները ավելի շատ իրադրական նշանակություն ունեն: Սրանք կարելի է ընդգրկել բառարանային համակարգ և հարստացնել հայերենի բառապաշարն ու պատկերավորման ձևերը:

Սակայն միշտ չէ, որ հեղինակին հաջողվել է ստեղծել դիպուկ և պատկերավոր արտահայտություններ ու կապակցություններ: Հեղինակի և հերոսի խոսքում հաճախ հանդիպում են լեզվական կանոններից զուրս ձևեր, որոնք ոչ մի կերպ չեն պատճառաբանվում: Ցավոք պետք է նշել, որ դրանք հեղինակի գեղապատկեր խոսքաշարի կողքին անըմբռնելի են, չունեն քերականական և ոճական որևէ արդարացում: Մի տեսակ շտապողականություն է նկատվում հեղինակի կողմից, կամ էլ պատկերի լեզվական արտահայտությունը յանքան բարդ է, որ ընթերցողը չի կարողանում այն ամբողջովին ընկալել: Իսկ հեղինակը ոչ ազատվում է բարդ կազմություններ գործածելու մտքից և առանց դադարի շարունակում է շարադրանքը, ոչ էլ կարողանում է այն ի մի բերել, ստեղծել գործողությանը բնորոշ լեզվական պատկեր ու հասցնել ընթերցողին. «Այդպես կանգնած էինք մեզ թվում էր արդեն եկաք...» /Տ. 304/, «Մեզ չէր հասկանում: Չէր հասկանում մենք հիմա՞ր ենք, հեղձո՞ւմի ժամանակներից մնացած կատաղի՞, թե՞ դերասանություն ենք անում» /Տ. 252/: Կապակցությունները հիմնականում առկայանում են անշաղկապ, առանց տրոհման, անգամ չունեն յուրահատուկ՝ լեզվի որևէ տարբերակին բնորոշ արտասանություն, չնայած որ «խոսակցական լեզվին շատ բնորոշ են անշաղկապ նախադասությունները, որոնցում մեծ դեր է կատարում հնչերանգը», ինչպես՝ «- Տեսնում ես գործի եմ, մեռնելարան է՞: Չիով էլ գնալու ես՝ թե ասեմ ոտքդ կցավի.- ապտակի հետ բացատրեց Պավլեն» /Մ.մ.ս. 68/: Բայական նման կազմությունների գործածությունը հակացուցված է ոչ միայն բառակազմական և քերականական իրողություններին, այլև բովանդակությանը, որի կառուցման ամբողջությունը, իհարկե, քիտում է լեզվական կոտ համակարգի ձևավորումից, որն

Ք Պարագլուխան, Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն, Ե., 1981, էջ 111.

էլ հաճախ տեսանելի է եղել գրականագիտական տեսակետից. «... ուզում է ծած առաջ ազատվել իր բեռից և, ահա այդ ամենը խցկում է, հա խցկում շարադրանքի մեջ, խտացնում ու խտացնում, մամլում է խոսքը»<sup>1</sup>:

Ձուգաբայերի կիրառությունը ներքուստ ծանրաբեռնում է գեղարվեստական խոսքը իմաստային և քերականական հատկանիշներով, արտաքուստ, սակայն, դրանք առկայանում են անհրաժեշտաբար՝ առաջ բերելով արտասանական ոչ գաղի գաղար, միևնույն ժամանակ ցույց տալով գործողությունների հաջորդականությունը. «միմյանց հետ գուզողդող գործողությունների միասնություն, այսինքն՝ երկու (երեք) գործողություններ դիտվում են իբրև մեկ միասնական պրոցես»<sup>2</sup>: Գեղարվեստական արձակում գործածված բայ-ստորոգյալների ժամանակային անհամաձայնությունը չի քայքայում զուգադրական բայերով կազմված հարադրությունները, քանի որ դրանք «արտահայտում են այնպիսի գործողությունների գաղափար, որոնք իրականության մեջ կապված են միմյանց հետ կամ իրենց բնույթով, կամ էլ մի ընդհանուր գործողության տարբեր հատվածներ են և աղյսխոսվ լրացնում են միմյանց ու մի ամբողջություն կազմում»<sup>3</sup>, օր.՝ «*Դանդաղ՝ մեր ուսի վրայով մենք ետ նայեցինք – վիթխարին սպիտակ լույս այգում ձեռները կանթած կանգնել մեզ էր նայում*» /Տ. 304/: Այսպիսիք, կարծում ենք, կարելի է ընդգրկել զուգաբայերի մի միջին շարքում: Դրանց ունեցած ժամանակային անհամաձայնությունը ձեռք է բերում մի տեսակ կերպավորման նշանակություն<sup>4</sup>: Գործողության ընթացքի կամ «կերպային հարաբերության արտահայտումը»<sup>5</sup> չի խախտում գործողության ընդհանրությունը, ամբողջականությունը, քանի որ բաղադրիչներից առաջինը կարող է արտահայտել «գործողության գաղափարն ավելի ընդհանուր բնույթով»<sup>6</sup>, իսկ երկրորդը՝ նպատակայնությունը: Ընդ որում բաղադրիչներից առաջինը վիճակային, կացութային, երկրորդին հատկանշող իմաստ է ունենում, իսկ երկրորդը առաջինի իմաստային և ընթացքային հատկանիշով ամբողջացնում է երևույթը, կրում ստորոգման հնչերանգային, քերականական հատկանիշը. օր.՝ «...*վիթխարի կինը թևերը կանթել մեզ մայում էր...*» /Տ. 303–304/, «...*ինքն այդ կինը իր ներքնաշորերը լվացել վառում էր, մեկը նրան օգնում էր վառել, թեկուզ այդտեղ օգնելու բան չկար*» /Տ. 247/, «...*Ազնիվ խոսք՝ թե մի բերան ինձ է հասնելու – կենտրոնը հավաքվել տասը մարդով վաղը զայիս է*» /Տ. 252/ և այլն: Ավելի շատ կենդանի խոսքում կենսունակ այս ձևերի քերականական – իմաստաբանական գործառույթը հարում է եզրային կերպի հավակցությանը, այսինքն՝ սահմանագծվում են ամբողջական գործողության մեկնակետը և հանգումը: Օրինակները ցույց են տալիս, որ գույզ բայերի համար մեծամասամբ գործածական են կատարյալ և անկատար կերպերը միասին: Փաստորեն՝ կատարյալ և անկատար, ինչպես նաև օժանդակ բայի արտահայտած

<sup>1</sup> Լ. Հախվերդյան, Մտորումներ, Ե., էջ 204.

<sup>2</sup> Գ. Ջառուկյան և ուրիշներ, Հայոց լեզու, հատ. Ա, Ե., 1980, էջ 387.

<sup>3</sup> Ա. Աբրահամյան, Բայի ժամանակակից հայերենում, Ե., 1962, էջ 195.

<sup>4</sup> Հայերենում կերպի քերականական կարգը երբևէ չի ընմպել զուգաբայական կազմությունների պլանում, և կարևոր ու ապրողունակ հարց կարող է լինել այն, թե կերպի քերականական կարգը վերջապես ինչ տարբերակներով է դրսևորվում ինչպա կազմություններում:

<sup>5</sup> Ե. Աղայան, Ժամանակակից իայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967, էջ 345.

<sup>6</sup> Լույն տեղում, էջ 192.

կերպային հակադրությունը ոչ միայն «եղելության քանակական արտահայտությունն է»<sup>4</sup>, այլև իմաստային: Բայ-բաղադրիչներով գործածված ստորոգյալների չարահատուկ կերպավորմամբ ժամանակային պլանում առանցքային պահի արտապատկերման հնարավորություն է ստեղծվում: Այսպիսիք ձևաբանական մակարդակում չեն քննվում, հավանաբար կամ խոնարհման հարացույցների հետ անմիջապես կապված չլինելու պատճառով, կամ էլ պարզապես նույնարժեք չեն կերպի համակարգում քննվող բայածներին, քանի որ ավելի շատ ունեն բառակազմական արժեք: Այնուամենայնիվ, Հ. Մաթևոսյանը կարևորել է լեզվական կառույցների՝ ոչ թե որոշակի շրջանակների մեջ գործածելը կամ պահելը, այլ մի գործողության մեջ ընդգրկված նախորդող և հաջորդող մանրապատկերների ստեղծելը, խոսակցական լեզվի հնչերանգությունը, անկաշկանդ խոսքի միջոցով ոչ միաստարր գործողության, երևույթի պարզաբանումը: Գեղարվեստական խոսքի ստեղծման հատկանիշներից մեկն էլ գրողի անկաշկանդությունն է լեզվի նկատմամբ, իսկ ռոճով հարուստ ստեղծագործությունը կանոնների բազմազանություն է առաջ բերում. այդ է պատճառը, որ գրողն ազատ է ձևաբանական և շարահյուսական միջոցների նպատակադիր օգտագործման մեջ<sup>5</sup>:

Հ. Մաթևոսյանի ստեղծագործություններում երևույթի լեզվական արտապատկերումը տարբեր բայերի միջոցով մեկ այլ առանձնահատկություն է առաջ բերում բաղադրիչների կապակցելության դաշտում: Հնարավոր է լինում բարդության առաջին բաղադրիչի դերբայով կիրառությունը, այսինքն՝ կապակցությունը կայուն չէ, և բայերը իրար հարակցվում են ազատ՝ համաձայն խոսողի ցանկության, խոսքային իրադրության, օր.՝ «... Մորադն ասել էր. «Աարապիը փորումն» ու խփել (խփելով գցել) գցել էր՝ անալի ցիկն ատամների մեջ»/Պ. 519/, «Մարտը ու տաք հագնված տղամարդիկ փափուկ նայելով (նայել - անցնել) հանգիստ անցնում էին...»/Ա.ա. 151/, «Չինգիզ-խանն, ասում է, աշխարհի կեսը ոտքի տակ, հարենը լիքը աղջիկ՝ էլի չի կշտանում. պառկել (պառկած սատկել, մեռնել) սատկում է քյոփակը՝ աչքը էլի աղջրկերքին է...»/Զ 134/: Բայական առաջին բաղադրիչը դառնում է երկրորդի «ընթացում»: Առաջին բաղադրիչի «ստորադասվելը» արդեն մատնանշում է լրացյալի գերապատվությունը նախադասության մեջ, այսինքն՝ քերականական ստորոգյալին բնորոշ հնչերանգը կրում է երկրորդ բայը, որն այնուամենայնիվ ինքնուրույն հանդես գալու ժամանակ քերարժեքված կլիտվի, քանի որ նրանից կպակասի ամբողջական գործողության իմաստը, տևականության երանգը, այստեղից էլ՝ չարահատուկ հնչերանգությունը, որը բնորոշ է խոսակցական տարբերակին: Լեզվի զարգացման գործընթացում նման կապակցությունների հաճախական գործածությունը ենթադրում է դարձվածների շարքերի ընդլայնում (չնայած դարձվածի երանգն արդեն իսկ մատնանշում են): Որոշ գուգահեռ բայ-ստորոգյալների դարձվածային արժեք ստանալու հանգամանքը հավաստում են որոշակիորեն ճանաչում ստացած կայուն կապակցությունները: Մեր լեզվում արդեն տարածված են բայական կապակցություններ, որոնք գուգաբայական

<sup>4</sup> Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե. 1974, էջ 253.

<sup>5</sup> Գ. Ջահուկյանը կերպային հակադրությունը նշում է եզելության մեկից ավելի ձևաբանական արտահայտության համար, մենք տարածում ենք նաև գուգաբայական կապակցությունների վրա

<sup>6</sup> Հնժու. «Սովետական գրականություն», 1963, N6:

կառույցներին բնորոշ առանձնահատկությունների հետ մեկտեղ ստացել են բայական դարձվածի արժեք: Հատկանշականն այն է, որ այդպիսի գուգարական բայերի բաղադրիչների փոխարկում հնարավոր չէ, քանի որ բաղադրիչներից մեկը կամ երկուսը փոխաբերական իմաստ են արտահայտում՝ ցույց տալով մեկ գործողություն, որի արտահայտումը պայմանավորված է բաղադրիչների հնչերանգային կուտ համակցությամբ, և «այդպիսիք չեն կարող փոխակերպվել լրացական կապակցությամբ, կայուն հարադրություններ են և ունեն բառային արժեք»<sup>1</sup>, ինչպես՝ «*Ինքը պաղեց մնաց ու ատեց Ներսեսին, և այդ ժամանակն քակի դուռը ետ խփվեցի որ բան մտավ իր Ոսկան խմած եղբայրը...*» /Ա.ա. 149/, «*Ընդունին քարացել կանգնել էր ջրեյքի բերանին*» /Ջ. 144/ և այլն: Խոսակցական լեզվին բնորոշ խոսքի սեղմությունը արձակում դրսևորված է նշված բայ-բաղադրիչներով, որոնք ունեն դարձվածային արժեք և արտահայտում են մեր ժողովրդի գուտ ազգային մտածողությունը. «Մաթևոսյանի խոսքին ժողովրդական երանգավորում են հաղորդուն հաճախակի գործածվող դարձվածները, որոնք առօրյա-խոսակցական ոճին բնորոշ լեզվական միավորներ են: Դարձվածների գործածությունը ևս պայմանավորված է ստեղծագործության քննատիկայով, խոսքի անհատականացման միտումով և անշուշտ՝ հեղինակի ոճի առանձնահատկությամբ»<sup>2</sup>:

Բանավոր խոսքին բնորոշ է բայական բաղադրիչների՝ այլ բառերով իրարից զատվելը կամ շարահյուսական հանդիպադրումների բնույթը: Ա. Մարգարյանը նշում է, որ գուգարական բայեր համարվում են ոչ միայն կից գործողություն ունեցող և հարադրվող բայերը, այլև տարանջատ ձևով գործածվող հարադրությունները: Ըարադասական նման կառուցվածքը խոսակցական<sup>3</sup> տարբերակից է անցել, որ գեղարվեստական արձակի լեզվին հաղորդում է յուրօրինակ հնչերանգություն: Այդպիսիք Հ. Մաթևոսյանը ստեղծագործություններում օգտագործել է որոշակի համաչափությամբ՝ ժողովրդական խոսքի քնարականությունն ու շունչը արտահայտելու նպատակով: Փաստորեն՝ նախադասության մեջ մեկ իմաստ հետապնդող բայ ստորոգյալների՝ սեռական-տրական հոլովով դրված բառով (բառերով) անջատելը ոճավորման արդյունք է. «*Որդինները եկան տան եղած չեղածը հավաքեցին, մերենանով տարան*» /Ա.հ. 37/, «*Եվ բոլոր հնձվորներն ու հավաքողները կանգնել Դիլանին էին մայրս*» /Ա.կ.կ.ա. 9/, «...երբեմն դպրոցական հին գանգ էր դողանցում, և այդ ամբողջը պիտի մերժվեր մեզանից, այդ ամբողջը մեզ քաշում իր մեջ էր առնում» /Տ. 263/ և այլն: Նկատելի է, որ բայ բաղադրիչների երկրորդ եզրում է որոշվում բայական սեռը: Նման կազմությունների կրած քերականական հատկանիշների խտացումը այլ քննության է մղում: Նշելի է միայն, որ այդպիսիք կարող են համարվել կայուն կապակցություններ, քանի որ յուրահատուկ արտասանության շնորհիվ տրամաբանական ստորոգյալը համարվում է երկրորդ բաղադրիչը: Մակայն ոչ միշտ է, որ ձրև անդամով իրարից հեռացած բոլոր կապակցությունները չեն, սակայն, գուգաբայեր կազմում. «*Ոչ կից գործածությամբ թուլանում է բաղադրիչների արտասանական կապը, և նրանք այլևս սերտորեն կապված*

<sup>1</sup> Է Աղայան, Ընդհանուր և հայկական քառադիտություն, Ե., 1984, էջ 226:

<sup>2</sup> Լ. Եզեկյան, Հրանտ Մաթևոսյանի արձակի խոսարարվեստի մի քանի հարցեր, Ե., 1986, էջ 33:

<sup>3</sup> Տե՛ս Ա. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1972, էջ 296:

գործառնությունների զարգացումը չեն արտահայտում»<sup>13</sup>։ Այս իրողությունը, կարծում ենք, հնարավոր չէ տարածել իրարից հեռացած բոլոր բայական կապակցությունների վրա։ Կան հարադրություններ, որոնց արտասանական յուրահատուկ նշանակության կողքին կարևորվում է նաև իմաստային հատկանիշը, այսինքն իմաստային և հնչեղանգային յուրահատկությամբ են առկայանում զուգաբայերը. «Հարադրվող բայերը իմաստապես որքան սերտ են կապված իրար հետ, այնքան էլ ամուր է արտասանական կապը նրանց միջև։ Եվ, ընդհանրապես, այն բայերը, որոնք շատ սերտ չեն միակցվում իրար հետ, բնականաբար, նաև արտասանական բույլ կապ են դրսևորում և արտասանվում զգալի դադարով»<sup>14</sup>։ Բայական կապակցությունների արտասանական որոշակի «եղելջրմները», այնուամենայնիվ, չեն քանդում մտապատկերման արդյունքում ստեղծված գործողությունների ընդհանրական նշանակությունները, որոնք ստեղծվել են տարբեր բայերով։ Հեղինակի լեզվական զգացողությունը, ընդհանուր առմամբ, կամոնավորված է. մի կողմից հարազատ է մնացել գրական լեզվում գործող ձևերի կիրառությանը, մյուս դեպքում ստեղծել է շարժման այն պատկերները, որ ընկալելի են ու ռճական յուրօրինակ արժեք են ներկայացնում։

Հարադրությունների՝ ըստ կազմության ու նրանց միջև եղած իմաստային կապի բնույթի խմբավորելը հնարավոր է դառնում բազադրիչների շարակարգային և ժամանակային հարաբերության ճշտումից հետո։ Հ. Մաթևոսյանի արձակում հենց ռճավորման և յուրահատուկ հնչեղանգ ստեղծելու նպատակով ոչ կից գործածված զուգաբայերը միևնույն խոնարհման համակարգով են անցնում. նախադասության մեջ տրամաբանորեն առանձնանում են բայական բազադրիչների միջև ընկած բառերը, որոնք առկայությամբ էլ բանաստեղծական հնչեղանգություն է ստանում կապակցությունը։ Եիչու է, մի տեսակ քուլանում է հարադրությունների արտասանական կապը, բազադրիչներն առանձին հնչադասություն են կրում և նախադասության տարածքում բուն զուգաբայերի պես սահուն արտաբերությամբ չեն դրսևորվում, բայց բազադրիչների իմաստային առանձնահատկությամբ երևույթի ամբողջական պատկեր են ստեղծում։ Բանն այն է, որ դրանք մույնպես կարելի է համարել բարդ կազմությամբ բառածներ, չնայած գտնում են, որ «զուգաբայական հարադրությունների բայական բազադրիչներն արտասանվում են այնպիսի առձգանությամբ, որ նրանց միջև չի լինում միջբառային արտասանական դադար, որպիսին լինում է սովորաբար արտասանական շրջային մեջ հանդես եկող տարբեր բառերի միջև»<sup>15</sup>։ Բազադրիչների՝ միջբառային արտասանական դադարը և նրանցում շարկապների կիրառության հնարավոր լինելը դեռ չեն ենթադրում հարադրության քայքայում։ Տեսակետը կարելի է տարածել դարձվածային նշանակություն ունեցող կազմությունների և ոչ սովորական գործողության արտահայտմանը միտված զուգաբայերի վրա։ Կենդանի խոսքում, այդտեղից էլ՝ Հ. Մաթևոսյանի արձակում, գուցե համաբանությամբ չի խախտվում բայական բազադրիչների իմաստային և արտասանական կապը։ Գալով նշված կապակցությունների բնույթին՝ նկատում ենք, որ այդպիսիք նմանվում են քերականական մեկ այլ կարգի՝ բայի տևական կերպի առաջացրած նշանակությանը. գործողության տևականության,

<sup>13</sup> Վ. Առաքելյան և ուրիշներ, Փամանակակից հայոց լեզու, հատ. 1, Ե., 1979, 286.

<sup>14</sup> Ա. Մարգարյան, Փամանակակից հայոց լեզու, Ե., 1990, էջ 101.

<sup>15</sup> Ա. Արրահստյան, նշվ. աշխ., էջ 190-191.

չարունակակամության իմաստն է արտահայտվում, հմմտ.՝ «Եթե մենք զավակ ունենայինք այսպես ահա նստած էինք լինելու հացի. նայեցինք այդ անմեղ դեմքին, նկատեցինք՝ որ սոխը ճաշի միջից հանում է, չի սիրում, այլ պոչով տեսանք՝ որ մեր տիկինը զմայլվել էր խաչախնե և նայում ու մտքերը հեռու են գնացել...» /Տ. 274/։ «զմայլվել»-ը «նայել» բայն իմաստավորող և կերպավորող հատկանիշ ունի), ինչպես նաև՝ «... Էն գերանը որ պատրաստել էս, կզմաս կկտրես, կփչացնես, կզորոնս ծորը կածես ու սողոց կրեքես մտաանում դիմամիտի մոտ կդնես, խնդրում ենք» /Տ. 263/։ Ստացվում է, որ «կզմաս կկտրես»-ը զուգաբայական կազմություն է, իսկ մյուսները՝ ո՞չ. դժվար չէ նկատել, որ բաղադրիչների մեջ, այնուամենայնիվ, նկատելի են «կերպային, տիպարային և ժամանակային» նշանակությունները, որ օրինակներում բնորոշիչ են դառնում վերլուծական բառածևերի համար. կարելի է համեմատել. «կարծեմում անտեսում ես», «Ծմակուտից մի երգեցիկ կտոր փրկվել ընկել է դուող», «կաղնի ծառից կարել ընկել ենք մատուռ», «Երբեմն կանգ էինք առնում հանգստանում», «իրեն զսպեց ասաց», «դարձրական հին գանգը քերեցին կախեցին», «տորով անջատեցինք ասացինք», «Դ-ոստոմին չբողենե իր ուրախության վրայով լաք անի սահմանդ մտնի», «բիկունքից տվել թորը խանչալով խառնել. ասել է դե գնա», «նկել էստեղ մեղավոր-անմեղ-հարակից յոթ տղա էր չբեցրել», «նուռում իրենց երեխեքին պատնում են», «մենք բռնենք Լճ չափարի վրայի խակի հետ ամուսնացնենք», «հավաքվեցին մի գիշերվա մեջ էս պատերը կասեցին», «հավաքվել պատերը դրել ու ծածկը կապել են» և այլն։ Երևույթների բազմազանության արտահայտման լեզվական ոչ բոլոր միջոցների գոյությունը առաջ է բերում բարդության ընդունելի և կիրառելի շարքեր։ Բայական կապակցությունների առաջին բաղադրիչները, ինչպես կարելի է նկատել, դեռ չեն ամբողջացնում իրողությունը. ամբողջական պատկերը նմարավոր չի դառնում նաև երկրորդ բաղադրիչների կամայական գործածությամբ։ Փաստորեն՝ արտահայտված գործողության մեջ նկատելի են դառնում տևական նշանակությունը, իմաստավորված ընթացայնությունը։ Լեզվական իրողությունների ազեբամամբ և համեմատական մեթոդի գործադրմամբ բացահայտվում է, որ իրարից հեռացած բայական բաղադրիչներից մեկը իմաստային առանձնահատկությամբ մատնանշում է բուն գործողության տեղությունը, իսկ մյուսը՝ ամբողջական հասկացության արդյունքը։

Արծակում հանդիպում են երեք և նույնիսկ չորս բայ-ստորոգյալներով կապակցություններ, ինչպես «Ամեն ինչ էլ մարդ-արարած է, ծնվում գորանում-պատակում-մեռում է» /Չ.գ. 51/։ Մեկ նախադասությամբ գրողը ներկայացրել է մարդկային կյանքի ամբողջությունը։ Այդպիսի ձևեր լեզվական առումով կարող են քիչ խորթ թվալ, բայց տեղին են և հեղինակային հնարանքներ են համարվում. «Մի կողմից գրողն անպայման պետք է հարգի գրական կանոնը, մյուս կողմից գրողն ստեղծագործող է, որանով նա լեզվաստեղծ է, ինչ-որ տեղ նա պիտի ազատ լինի նաև լեզվական առումով»<sup>11</sup>։ Փաստորեն՝ գրական լեզվում ընդունված, խոսակցականում տարածված և հեղինակի ստեղծած բայ-բաղադրիչների գործածությունը միատեսակ չէ. Իմաստային ու արտասահական երանգներով գործածված բայական կապակցությունների ամենատարբեր ձևերը կարելի է հանդիպել Հ. Մաթևոսյանի գեղարվեստական արձակում. «Շուրջը խուլ

<sup>11</sup> Հ. Հարությունյան, Գեղարվեստական խոսք, Ե., 1986թ., էջ 52։



լուրթյուն էր, գետի մեջ ծանրորեն մի լոթո ձուկ ցատկեց՝ լուռ, հետո երիտասարդը տրորեց քացեց ականջը...» /Ջ. 127/։ «Դիվանը կանգնել էր ձեռքերը կոնքերին, հորը նայում էր մտածկոտ, հետո կապեց վերքացրեց նրա հնձածը և գերանդին առավ նրա ձեռքից» ԱՆ.Կ.ա 9/, «...նժույզի մոտով անցանք, ոտ խփեցի՜նք չավարի քարն պատին, շեք տվինք անցանք լատանի վրայով ու այգույ էլանք...» /Տ. 274/ և այլն։ Բայ – բաղադրիչների արտահայտած իմաստը ամբողջանում է հենց նրանց բառակազմական և արտասանական ձևի պլանում, ուրե՛մն՝ բաղադրիչների սերտ միակցությամբ գիտակցության մեջ հնարավոր է դառնում այս կամ այն երևույթի անսխալ պատկերացումը։

### ՀԱՄԱՌՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ա.ա. – Աչման արև  
 Ա.կ.կ.ա. – Այս կանաչ-կարմիր աշխարհը  
 Անն. – Աննիձոր  
 Մ.մ.ս. – Մենք ենք, մեր սարերը  
 Ն.գ. – Նարինց գամբիկ  
 Չ.գ. – Չեզոք գոտի  
 Պ. – Պատիժը  
 Ջ. – Ջաղացը  
 Տ. – Տերը

*М. С. Кумини*

### О НЕКОТОРЫХ ЛИНГВОСТИЛИЧЕСКИХ ВОПРОСАХ ПОВТОРНЫХ ГЛАГОЛОВ И ГЛАГОЛЬНЫХ КОМПОНЕНТОВ (По произведениям Гранта Матевосяна)

В статье рассматриваются слова, которые в армянском образуются повтором основы или словообразовательных элементов. Они, главным образом, характерны для разговорного армянского языка, и поэтому часто употребляются в прозе Гранта Матевосяна, писателя, который является своеобразным новатором художественного слова, в частности, в использовании живой армянской речи.

В статье даны классификация и анализ соответствующих единиц, которые дополняют лексическую палитру прозаика.

*М. С. Кумини*

### On some linguistic issues of reduplicated verbs and verbal conenouents (illustrated by Hrant Matevosyan's works).

The article studies with reduplicated stemes or word forming elements in Armenian. They mainly are typical of Armenian everyday speech and this is why are used of ten in H. Matevosyan's prose, who is an innovator of literary prose. A classification and analysis of these units.